ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1252-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում կատարել հետևյալ լրացումները՝

1) 33-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-ին ենթակետով՝

«17.1) ընտրված մասնակիցն իրավունք ունի գնման պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի

պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու կամ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը.».

2) VII գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ VII.1 գլխով՝

«VII.1. ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ (ՖԱԿՏՈՐԻՆԳԻ) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

58.1. Ընտրված մասնակիցն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կնքել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագիր:

58.2. Ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջումը չի կարող կատարվել նախքան գնման պայմանագրի կնքումը, սակայն կարող է կատարվել մինչև պայմանագրի կատարման արդյունքների ընդունումը, բայց ոչ ուշ, քան պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու կամ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

58.3. Ֆինանսական գործակալը պարտավոր է պատվիրատուին, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել՝ ընթացակարգի հրավերով նախատեսված

ծանուցման ձևին համապատասխան՝ Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով: Ծանուցման տեքստը պետք է ներառի նշում առ այն, որ ֆինանսական գործակալը համաձայն է սույն կարգի 33-րդ կետի 17.1-ին ենթակետով սահմանված պահանջներին:

58.4. Պատվիրատուն ունի նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով այլ իրավունքներ:

58.5. Ֆինանսական գործակալն իրավունք ունի պատվիրատուից կամ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից պահանջել և ստանալ ֆակտորինգի պայմանագրի առարկա հանդիսացող պահանջի համար հիմք հանդիսացած գնման պայմանագիր (առկայության դեպքում), ներառյալ դրա կատարման վերաբերյալ տեղեկատվություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

58.6. Սույն կարգի VII.1 գլխով սահմանված նորմերը չեն տարածվում պետական գաղտնիք պարունակող գնումների վրա:».

3) 115-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 115.1-ին կետով՝

«115.1. Սույն կարգի VII.1 գլխի համաձայն ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին ծանուցում ստացած լինելու դեպքում պատվիրատուն վճարումը կատարում է ֆինանսական գործակալին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 180 օր հետո, և դրա գործողությունը չի տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ